

ՄՁ. Թ. 822). Լսպ. կը վախճանի 1820 ին: 1806ին Ս. Յակոբի վանքին կը յիշատակէ մէկ զոյգ մարգարտայեռ և ականազարդ սաղաւարտ կարմիր թաւիչէ, ինչպէս նաեւ թանկագին քարերով ոսկի խաչ մը, 1801 ին գաւազան մը, 1808 ին եւթիփորոն ձեռք մը եպիսկոպոսական զգեստով, հետեւեալ յիշատակարաններու համաձայն. «Ի վայելումն Վանայ նուիրակ Սիմէոն վրդ. Վանեցի և յիշատակ Ս. Յակոբայ որ յերուսաղէմ, թվին ՌՄԾ.» (= 1801): «Յիշատակ է եմիփորոնս հանդերձ բոլոր եպիսկոպոսական զգեստուք Ս. Աթոռոյս նախկին աւագ լուսարար Վանեցի Սիմէոն արքեպիսկոպոսին, թուին ՌՄԿէ (= 1818). (Յուց. Պ.):

ՍԻՄԷՈՆ ԵՊՍ — 1687ին Սիմէոն եպոս. առանց սահմանեալ տուրքը վճարելու՝ պատրիարքական պէրաթ կ'ստանայ, եւ Երուսաղէմ գալով՝ պաշտօնանկ կ'ընէ Պոլսեցի Յովհաննէս պարքը. և չորս տարի կը պաշտօնավարէ, բայց յետոյ իր նախորդին հնարքովը կը մերժուի Աթոռէն (Ժպե. հար. Ա. էջ 405): Հալէպի եկեղեցիին Թ. 117 ձեռագիրի մէջ գրուած նոտրգիր մէկ յուշագրութիւնն ալ կը հաստատէ այս պարագան. «Այս խազստս տէր Սարգիս եպիսկոպոսի է. որ և գրել է ի սբ. քաղաքն Երուսաղէմ. ի առաջնորդութեան տէր Սիմոն արքեպոսի ի թվականիս հայոց Ռ և Խին...» (= 1591): Անուշագրութեամբ գրուած է այս թուականը որ պէտք է ըլլայ ՌՃԽ (= 1691), այն է Սիմէոնի պաշտօնավարութեան տարին:

ՍԻՄԷՈՆ ԵՐԷՅ ԻԼՈՎՅԻ.— 1580ին Իլովի մէջ ընդօրինակած է Սաղմոս մը որ 1610ին յիշատակ կը տրուի Ս. Յակոբի վանքին (ՄՁ. Թ. 419) հետեւեալ յիշատակարանով. «... Արդ զրաւ եղև գրչութեանս ի թվ. հայոց մեծաց ՌԻԹ (= 1580), Աւգոստոսի Իէ... տարբեր գրչով. «Եւ արդ եղաւ սա յիշատակ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ ի դուռն Ս. Յակոբայ առաքելոյն. ի հայր. տեառն տէր Գրիգոր արհիեպոս.ին. ի թվ. ՌԿ (= 1611): (Խապ. Յուց. տետր. ԼԲ. էջ 2397—98):

ՍԻՄԷՈՆ ԿԹՂ. ԵՐԵՒԱՆՅԻ.— 1752ին Եաղուպ ամիրային հետ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը: Կթղ. ամենայն հայոց (1763—80): Վախճանած է 1780 ին եւ թաղուած Ս. Գայիանէի վանքը. հրատարակած է Ջաւթոը և